



Ս.Ճ.ի . — Porte principale d'Ani.

ղհնաչակաւոր սրտառուչ վերնագիր դժպհի դրանն՝ զոր երդեաց Տանգէ քերդողահայրն խաղացուց .

PER ME SI VA NELLA CITTA' DOLENTE....

Ընդ ԻՍ ԵՆ ՄՈՒՏԻ Ի ՔԱՂԱՔՆ ՑԵՒԵԳԻՆ . . .

Պարզագոյնն թերևս բացատրիցէ Անգղիացին այն սպայ (1) որ յամին 1837 էանց ընդ Անի, և ասէ .

« Մերամաղճիկ յոյժ զգացմունս ազգէ 'ի սիրտ տե-
 ,, սարան քաղաքիս այս անսպաստացելոյ . եկեղեցիք
 ,, նորա լքեալք յուշ իմն այսպէս առնեն, եթէ ազգ-
 ,, հզոր քրիստոնեայ անկեալ է աստանոր ընդ բազ-
 ,, մակրկին հարուածովք խժդժագոյն բարբարոսացն
 ,, Ասիոյ և անագորուն թշնամեաց հրահանգաց քրիս-
 ,, տոնէութեան : Ըննուածոցն անեղծ մնացութիւն՝
 ,, յերկբայս արկանէ զկիրս միայնութեան, և յան-
 ,, զգաստից իմն յածին աչք շուրջանակի ինդրել նշա-
 ,, նակս կենդանութեան : Ոչ այսպիսիս ներգործէ 'ի
 ,, սիրտ ազգմունս տեսիլ նշխարեալ աւերակաց հը-
 ,, նութեան զառանցելոց ժամանակաց . անկերպա-
 ,, ղան հողարուրք Բարեւոյնի՝ երեխն հանգոյնք կը-
 ,, մախաց մեռելուոց . իսկ ամայացեալ այս և սա-
 ,, կաւին կանգուն քաղաք՝ նմանեալ թուի դիական
 ,, այն ինչ անշնչացելոյ, յորում դեռ ևս նշմարիցին
 ,, տիսլք կենդանականք : Այլ անխնայ և անաչառն
 ժամանակ ամ յամէ աճեցուցեալ զխրամատ և զաւեր

ամայացելոյն, սպառնայ զրկել զմեզ և զյետինս մեր՝ և 'ի տիրախառն միթարուութենէ այտի երևութի կեն-
 դանասիպ մեռելութեանցն . վասն որոյ և երախտա-
 պարտս կացուացէ զմեզ և զապագայս՝ արանցն եր-
 կասիրաց մերոցս և օտարաց, որք աւանդեցին 'ի դիր
 և 'ի դրոշմ՝ զմնացուածս արձանաց և զշինուածոց քա-
 ղաքին . որոց յետ ամենեցուն Քէսոզնէր (1) ոմն դեր-
 մանացի յամին 1850 հաւաքեաց զամենայն՝ նկարա-
 հանութեամբ, և արար դիրս մի Տեսարանաց հնու-
 թեանց Անուոյ, (զոր կարծեմ՝ չև ևս հրատարակեալ
 'ի լոյս) : Իսկ մեր շատացեալ այսքանեաւս, դարձ-
 ցուք յոճ՝ համաօտուութեանս և 'ի շրջալայրս Անուոյ :

40 . Յարեւելից հիւսիսոյ Անուոյ իբրու ժամաւ վե-
 րագոյն առ եզեր Ախուրեան գետոյ կայ նշանաւորն
 'ի շրջակայ շէնս քաղաքին՝ Հոռուսի վանք, որ և խօ-
 շաւանք կոչի՝ յանուն երկուց քառակուսի աշտարակա-
 ձև սենեկաց որ խօշուն կոչին, և չէ յայտ յինչ սակս
 շինեալք, մերձ 'ի վանսն . սա կարի ընդարձակ է և
 պարսպապատ և ամենայն մասամբն հոյակապ ար-
 քայալայել շինուած . եկեղեցին բարձրագմբէթ շի-
 նեալ է յարքայէն Յովհաննէ յամին 1038, երկայ-
 նութեամբն դրեալ է հաւասար կաթուղիկէին Անուոյ,
 այլ անձուկ առ լայնութիւն, բաժանեալ 'ի գաւթ
 վայելուչ և սիւնաբարձ, տաճարն անսիւն, երկողին
 ևս գմբէթաւորք . զարմանակերտ ևս շինուած է Նըշ-

(1) Capt. Richard Wilbraham.

(1) Kästner.